# ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

## ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ԹԱՎՐԻԶ

ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

*Մենք և Միաբանությունը խորապես վշտացած ենք Սուրբ Էջմիածնի հարազատ ու հավատարիմ զավակի, ժողովրդասեր, գործունյա, հեղինակավոր և դժվար փոխարինելի միաբանի մահվան առթիվ։*

*Աղոթում ենք Տիրոջը, որ ի քարանցս հայսցանե հարուցանե որդիս Աբրահամու։*

*Մխիթարեցեք Մեր կողմից յուրայնոց և Մեր սիրեցյալ հոտը։ Թաղման սգահանդեսին կնախագահե և կպատարագե Ռուբեն Եպիսկոպոսը։*

*Հեռագրված է բոլոր թեմերին հանգուցյալի հիշատակին պատարագել, հոգեհանգստյան պաշտոն կատարել և քարոզել։*

ԳԵՎՈՐԳ Զ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*Սեպտեմբեր 30*
*1948 թ.*
*Ս. Էջմիածին*